Հավելված 3

**ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական հմտությունների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության 2019-2020 թթ. հարցման արդյունքների և 2018-2019 թթ. հարցման արդյունքների համեմատական**

**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

(2019-2020 ուստարի)

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առջև, որպես կրթական հաստատություն, դրված հիմնական խնդիրներից կարևորագույնը աշխատաշուկային համապատասխան որակավորում ունեցող շրջանավարտներ տալն է: Արդյունավետ և բարձրորակ կրթություն ապահովելու համար մասնաճյուղը մշտապես կարևորել է, թե՛ համալսարանականների, և թե՛ արտաքին շահակիցների կարծիքը և առաջարկները: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը առանձնակի նշանակություն է տալիս արտաքին շահակիցների շրջանում պարբերական սոցիալական հարցումներին, որոնց արդյունքները թույլ են տալիս ժամանակին ու պատշաճ արձագանքել աշխատաշուկայի պահանջների դինամիկային: Հարցումները իրականացվել են **2011** թվականից՝ ՄԿՈԱ բաժնի, այնուհետև «Արտաքին կապերի» բաժնի կողմից: Վերջին 3 տարիներին հարցման մատչելիությունը բարձրացնելու համար հարցումը իրականացվել է առցանց:

Ելնելով վերը նշվածից և ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի 3.1.5 կետից՝ այն է «Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արտաքին կապերի բաժինը **2019-2020** ուստարում իրականացրել է հետազոտություն մարզաբնակ գործատու շահակիցների շրջանակներում:

Հարցաշարում, 5-բալային սանդղակով գնահատվել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները, կազմակերպչական, ստեղծագործական ու հաղորդակցական կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման մշակույթը, թիմային աշխատանք կատարելու ունակությունները և այլն: Հետազոտության նպատակն էր, բացահայտել արտաքին շահակիցների կարծիքը և գնահատականը շրջանավարտների մասնագիտական և որոշակի անձնային որակների վերաբերյալ:

Հետազոտությանը մասնակցել են մարզի խոշոր կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների, ղեկավար անձինք՝ թվով **69 շահակից**: Հետազոտությունը անց է կացվել առցանց: Հարցաթերթը ուղարկվել է **155** կազմակերպության էլեկտրոնային հասցեի:

Հարցման օբյեկտիվությունը և ճշտությունը ապահովելու նպատակով առցանց հարցումն անց է կացվել անանուն:

Հետազոտության արդյունքները ընդհանուր առմամբ բարձր են և գոհացնող: Ինչը փաստում է, որ մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է աշխատաշուկային տալ բանիմաց և մրցունակ մասնագետներ:

Արդյունքը պայմանավորված է մասնաճյուղում բարձրորակ մասնագետների և մշտական հետևողականության առկայությամբ:

Ներկայացնենք տարբեր տարիներին հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը.

| **Հարցմանը մասնակցած կազմակերպությունների թիվը** | **2013թ.** | **2014թ.** | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** | **2019թ.** | **2020թ.** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 16 | 24 | 37 | 44 | 44 | 50 | 69 |

Տարիների ընթացքում նկատելի է մասնակիցների թվի աճը: Ինչը վկայում է մասնաճյուղի ակտիվ համագործակցության շրջանակի ընդլայնում:

Հարցման մեջ ներառվել են շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության, տեսական գիտելիքների իմացության, գործնական հմտությունների և մասնագիտական ընդհանուր կարողությունների գնահատումը: Համեմատած նախորդ տարիների՝ արդյունքը զգալիորեն աճել է:

| Թիվ | Շրջանավարտների | Միջ. գնահ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2013թ. | 2014թ. | 2015թ. | 2016թ. | 2017թ. | 2019թ. | 2020թ. |
| **1** | Մասնագիտական պատրաստվածությունը | 3.4 | 3.7 | 4.1 | 3.9 | 4.05 | 4.00 | **4.93** |
| **2** | Տեսական գիտելիքների իմացությունը | 3.9 | 3.8 | 4.1 | 3.8 | 4.07 | 4.03 | **4.93** |
| **3** | Գործնական հմտությունները | 3.3 | 3.6 | 3.8 | 3.7 | 3.86 | 3.08 | **4.79** |
| **10** | Մասնագիտական խոսքը | 3.1 | 3.5 | 3.8 | 3.6 | 4.11 | 4.00 | **4.93** |

Ներկայացնենք մասնաճյուղի շրջանավարտների մասնագիտական որակների վերաբերյալ **վերջին 7 տարիների** հարցումների ընթացքում արտաքին շահակիցների գնահատականների համեմատական գրաֆիկները:












Ելնելով վերոնշյալ գրաֆիկներից, կարող ենք հստակ փաստել, որ ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը՝ մասնակից-ների **99%-ի** կողմից գնահատվել է լավ և գերազանց: Բարձր է գնահատվել նաև ուսանողների տեսական գիտելիքների իմացությունը՝ **99%,** գործնական հմտությունները՝ **96%:** Այս համադրությունների արդյունքների համեմատումը վկայում է, որ ուսանողների տեսական գիտելիքները կիրառվում են գործնականում, որը նշանակում է մասնաճյուղը կարողացել է իր առջև դրված խնդրի լուծումը ճիշտ կազմակերպել:

Ստորև ներկայացված է շահակիցների գնահատականների արդյունքները.

| Թիվ | Շրջանավարտների | Միջ. գնահ | | Գնահատական | | | | | 4 և 5 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնահ. | % | 5 | 4 | 3 | 2 | 0 | քան. | % |
| 1 | Մասնագիտական պատրաստվածությունը | 4.93 | 99% | 19 | 33 | 16 | 1 | 0 | 52 | 75.4% |
| 2 | Տեսական գիտելիքների իմացությունը | 4.93 | 99% | 20 | 38 | 9 | 2 | 0 | 58 | 84.1% |
| 3 | Գործնական հմտությունները | 4.79 | 96% | 16 | 29 | 21 | 2 | 1 | 45 | 65.2% |
| 10 | Մասնագիտական խոսքը | 5.00 | 100% | 23 | 29 | 16 | 2 | 0 | 52 | 75.4% |

**Այս խմբից կարելի է եզրակացնել, որ ուշադրություն կարելի է դարձնել ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը:**

Շրջանավարտ-գործատու կապի ստեղծման համար հաջորդ խնդիրը ինքնադրսևորումն է՝ գիտելիքները և հմտությունները ի ցույց դնելու կարողությունը: Հաշվի առնելով այս փաստը, հարցման մեջ ներառվել են հարցեր, պարզելու շրջանավարտների մասնագիտական խոսքի և հաղորդակցվելու կարողությունների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիք գնահատականը:

Վերջին տարիների հարցման համեմատականները **ներկայացված են ստորև**: Ըստ նախորդ տարիների ցուցանիշի 2020 թվականին ունենք զգալի արդյունք:

| Թիվ | Շրջանավարտների. | Միջ. գնահ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2013թ.** | **2014թ.** | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** | **2019թ.** | **2020թ.** |
| **4** | Հաղորդակցվելու կարողությունները | | 3.75 | 4.38 | 3.91 | 4.20 | 4.10 | **4.93** |

| Թիվ | **2020 թվական** | Միջ. գնահ | | Գնահատական | | | | | 4 և 5 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **գնահ.** | **%** | **5** | **4** | **3** | **2** | **0** | **քան.** | **%** |
| **4** | Հաղորդակցվելու կարողությունները | **4.93** | **98.6%** | **28** | **27** | **13** | **1** | **0** | **55** | **79.7%** |

Ըստ գրաֆիկում պատկերված արդյունքների, կարող ենք եզրակացնել, որ շրջանավարտների մոտ հաղորդակցվելու կարողությունները գոհացուցիչ են՝ **98.6%**: Եվ չնայած, որ բարձր է գնահատվել նաև մեր շրջանավարտների մասնագիտական խոսքը՝ **100%,** սակայն, որ առերես հանդիպումների ընթացքում շրջանավարտ-ների մոտ մասնագիտական խոսքի ճկունությունը ըդգծվել է, որպես թերի կողմ: Ինչից ելնելով կարելի է համարել, որ **այն դեռ ունի զարգացման կարիք**:

Հաշվի առնելով, որ մեր կրթական ծրագրերում որպես վերջնարդյունք ներառված է նաև շրջանավարտի ղեկավարելու կարողությունները,




հետազոտության մեջ ներառվել են նաև շրջանավարտների կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ կողմերի գնահատականը ըստ արտաքին շահակիցների:

Ելնելով դիագրամից, կարելի է փաստել, որ մեր կրթական ծրագրում նշված վերջնարդյունքը հիմնական չափով ապահովված է, ինչը գոհացուցիչ փաստ է:

Հաշվի առնելով ցանկացած ոլորտում դինամիկ զարգացումը, աշխատաշուկայում մրցունակ լինելու համար խիստ կարևոր է նաև ստեղծագործական մոտեցումները և ճկուն աշխատելաոճը:

Նախորդ տարիներին՝ ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում, քննադատական-վերլուծական կարողությունները, տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները, խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները, հիմնականում գնահատվել են բարձր՝ ընդ որում, արդյունքը համեմատական կարգով աճել է: Արդյունքները ներկայացված են ստորև.

| Թիվ | Շրջանավարտների. | Միջ. գնահ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2013թ. | 2014թ. | 2015թ. | 2016թ. | 2017թ. | 2019թ. | 2020թ. |
| 6 | Ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում | 3.44 | 3.74 | 3.86 | 3.86 | 4.16 | 4.20 | **4.79** |
| 7 | Քննադատական – վերլուծական կարողությունները | | 3.74 | 3.84 | 3.52 | 3.90 | 3.90 | **4.79** |
| 8 | Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները | 3.06 | 3.52 | 3.95 | 3.52 | 4.05 | 3.90 | **5.00** |
| 9 | Խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց | | 3.52 | 3.86 | 3.41 | 4.00 | 3.90 | **4.64** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները | | | | | | | |

Շրջանավարտների մասնագիտական և ընդհանրական կարողությունների գնահատման միջին ցուցանիշը.

| Թիվ | Շրջանավարտների | Միջ. գնահ | | Գնահատական | | | | | 4 և 5 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնահ. | % | 5 | 4 | 3 | 2 | 0 | քան. | % |
| 6 | Ստեղծագործական մոտեցում-ները մասնագիտական գործընթացում | 4.79 | 95.7% | 19 | 24 | 23 | 2 | 1 | 43 | 62.3% |
| 7 | Քննադատական – վերլուծա-կան կարողությունները | 4.79 | 95.7% | 17 | 22 | 24 | 5 | 1 | 39 | 56.5% |
| 8 | Տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները | 5.00 | 100% | 16 | 33 | 19 | 2 | 0 | 49 | 71% |
| 9 | Խնդրահարույց հարցեր առաջադրելու և դրանց լուծման արդյունավետ ուղիներ փնտրելու կարողությունները | 4.64 | 92.9% | 9 | 31 | 25 | 2 | 2 | 40 | 58% |

Համեմատության համար ներկայացնենք նաև ***յոթ տարիների կտրվածքով միջին վիճակագրական բալերը՝*** Բերված տվյալները ևս վկայում են, որ վեց տարիների ընթացքում մասնաճյուղի շրջանավարտների այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են մասնագիտական գործունեության մեջ ստեղծագործական մոտեցումը, քննադատական-վերլուծական կարողությունները, անհրաժեշտության դեպքում արագ ու ճիշտ կողմնորոշվելու, խնդրահարույց հարցեր առաջադրելու և լուծման օպտիմալ













ուղիներ որոնելու կարողությունները, արտաքին շահակիցների գիտակցության մեջ ամրագրել են վիճակագրական աճ:

Արտաքին շահակիցների կողմից շրջանավարտների ինքնազարգացման ձգտմանը տված գնահատականները.

| Թիվ | Շրջանավարտների | Միջ. գնահ | | Գնահատական | | | | | 4 և 5 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնահ. | % | 5 | 4 | 3 | 2 | 0 | քան. | % |
| **16** | Ինքնազարգացման ձգտումը | **4.71** | **94.3 %** | **24** | **31** | **9** | **2** | **0** | **55** | **79.7%** |

Ըստ արտաքին շահակիցների շրջանավարտների ինքնազարգացման ձգտումը՝ **<u>վերջին</u>** ***յոթ տարիների կտրվածքով.***




Վերջին երեք տարիներին արդյունքները կարող ենք համարել գոհացուցիչ:

| Թիվ | Շրջանավարտների. | Միջ. գնահ | | Գնահատական | | | | | 4 և 5 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնահ. | % | 5 | 4 | 3 | 2 | 0 | քան. | % |
| **5** | Կազմակերպչական կարողությունները | **4.93** | **98.6%** | **24** | **31** | **13** | **1** | **0** | **55** | **79.7 %** |
| **11** | Վարվեցողության | **4.93** | **98.6%** | **37** | **25** | **7** | **0** | **0** | **62** | **89.9** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կանոններին և էթիկայի նորմերին հետևելը | | | | | | | | | % |
| **12** | Աշխատանքային պատասխանատվությունը | **4.93** | **98.6%** | **37** | **25** | **7** | **0** | **0** | **62** | **89.9 %** |
| **13** | Թիմային աշխատանք կատարելու ունակությունները | **5.21** | **104.3 %** | **28** | **30** | **10** | **5** | **0** | **58** | **84.1 %** |
| **14** | Գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները | **4.93** | **98.6%** | **32** | **27** | **8** | **2** | **0** | **59** | **85.5 %** |
| **15** | ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները | **4.86** | **97.1%** | **27** | **32** | **7** | **2** | | **59** | **85.5 %** |

Ելնելով վերոնշյալ աղյուսակից, կարող ենք փաստել, որ շահակիցները գոհացնող պատասխաններ են տվել շրջանավարտների կազմակերպչական կարողություններին, աշխատանքային պատասխանատվությանը, թիմային աշխատանք կատարելու ունակություններին, գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողություններին, վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելուն:

***Ներկայացնենք նաև նախորդ տարիների ցուցանիշները.***

| Թիվ | Շրջանավարտների | Միջ. գնահ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2013թ.** | **2014թ.** | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** | **2019թ.** | **2020թ.** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **5** | Կազմակերպչական կարողությունները | | 3.75 | 4.38 | 3.91 | 4.20 | 4.10 | **4.93** |
| **11** | Վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը | 3.31 | 3.5 | 4.24 | 3.93 | 4.20 | 4.30 | **4.93** |
| **12** | Աշխատանքային պատասխանատվությունը | | 3.88 | 4.43 | 4.11 | 4.34 | 4.20 | **4.93** |
| **13** | Թիմային աշխատանք կատարելու ունակությունները | 3.5 | 3.87 | 4.33 | 4.11 | 4.27 | 4.10 | **5.21** |
| **14** | Գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները | | 3.87 | 4.38 | 3.91 | 4.34 | 4.20 | **4.93** |
| **15** | ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները | | | | | | 4.20 | **4.86** |




«ԵՊՀ ԻՄ-ի հեղինակությունը Ձեր կազմակերպությունում և ԵՊՀ ԻՄ-ի հեղինակությունը տարածաշրջանում» հարցերին համապատասխանաբար բարձր գանահատական են տվել շահակիցների **99%-ը** և **96%-ը:** Որը

բավականին բարձր և գոհացնող ցուցանիշ է:

*Արդյունքները՝ ստորև.*

| Թիվ | Շրջանավարտների. | Միջ. գնահ | | Գնահատական | | | | | 4 և 5 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գնահ. | % | 5 | 4 | 3 | 2 | 0 | քան. | % |
| **17.1** | Ձեր կազմակերպությունում | **4.79** | **95.7%** | **30** | **30** | **7** | **1** | **1** | **60** | **87%** |
| **17.2** | Տարածաշրջանում | **4.93** | **98.6%** | **25** | **29** | **11** | **4** | **0** | **54** | **78.3%** |

| Թիվ | Շրջանավարտների. | Միջ. գնահ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2014թ.** | **2015թ.** | **2016թ.** | **2017թ.** | **2019թ.** | **2020թ.** |
| **17.1** | Ձեր կազմակերպությունում | 4.33 | 4.57 | 4.57 | 4.66 | 4.38 | **4.79** |
| **17.2** | Տարածաշրջանում | 4.25 | 4.38 | 4.41 | 4.59 | 4.38 | **4.93** |

Հետազոտության մեջ եղել են հարցեր, որոնց միջոցով փորձել ենք պարզել արդյոք շահակիցները խորհուրդ կտան իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ: Հարցվողներից **66-ը (96%)** նշել է այո, իսկ **3-ը (4%)** ոչ: Ինչը նույնպես փաստում է տարածաշրջանում ԵՊՀ ԻՄ-ի բարձր հեղինակությունը: Չնայած բարձր արդյունքին, ստորև ներկայացված աղյուսակից հետևում է, որ նախորդ երեք տարիների՝ մասնավորապես 2019 թվականի, ցուցանիշը նվազել է:

Այնուամենայնիվ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը մշտապես կատարելագործում է թափանցիկ և հանրամատչելի գործունեություն:

| Հարց | 2014թ. | 2015թ. | 2016թ. | 2017թ. | 2019թ. | 2020թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ | 91.7 % | 94.6 % | 90.9 % | 95.6 % | 99.3 % | **95.7 %** |




ԵՊՀ ԻՄ-ում նոր մասնագիտության մագիստրատուրայում մասնագիտացման կարիք կա հարցին շահ

***Նախորդ տարիների համեմատ առաջարկվող մասնագիտությունների ցանկը ավելացել է և առաջարկվել է նոր մասնագիտություններ (առանց խմբագրման).***

| ԹԻՎ | ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՔԱՆԱԿ |
|---|---|---|
| **1.** | Իրավաբանություն, իրավագիտություն, իրավունքի հիմունքներ | **7** |
| **2.** | Քիմիայի և կենսաքիմիայի ուսուցիչ | **7** |
| **3.** | Ռուսաց լեզվի ուսուցիչ | **6** |
| **4.** | Մանկավարժական կադրերի / բոլոր առարկաներից/ պատրաստում, դասվարներ, առարկայական մանկավարժներ | **4** |
| **5.** | Գյուղատնտեսական ոլորտին վերաբերող ֆակուլտետ, որի շրջանավարտները կզբաղվեն գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: | **3** |

| | | |
|---|---|---|
| | Անասնաբույժներ, ինչը մեր մարզի աշխարհագրական դիրքից ու զարգացման ռազմավարության տեսանկյունից ավելի նպատակահարմար է: | |
| **6.** | Տեխնոլոգիայի ուսուցիչ /տղաների/, կերպարվեստ | **3** |
| **7.** | Ռազմական կրթություն, ռազմագիտություն | **3** |
| **8.** | Լրագրություն, PR | **2** |
| **9.** | Ծրագրավորում, տեխնիկական մասնագետ | **2** |
| **10.** | Գերմաներեն լեզվու | **2** |
| **11.** | Կենսաբանության ուսուցիչ | **2** |
| **12.** | Աշխարհագրության ուսուցիչ | **2** |
| **13.** | Ֆիզիկայի ուսուցիչ, էլեկտրոտեխնիկայի մասնագետ | **2** |
| **14.** | Բնագիտական առարկաների ուսուցում | **2** |
| **15.** | Ֆիզկուլտուրա | **2** |
| **16.** | Միջազգային հարաբերություններ | **1** |
| **17.** | Մասնագիտական թարգմանչական արվեստ | **1** |
| **18.** | Մարքեթինգ | **1** |
| **19.** | Հոգեբանություն | **1** |
| **20.** | Դեղագիտություն | **1** |
| **21.** | Տուրիզմ և բիզնես | **1** |
| **22.** | Բարձր տեխնոլոգիական մասնագիտություններ | **1** |
| **23.** | Մասնագիտական կողմնորոշում | **1** |
| **24.** | Բարոյագիտություն, էթիկա | **1** |
| **25.** | Փիլիսոփայություն | **1** |

Առավել շատ պահանջված մասնագիտություններն են «Քիմիա (մանկավարժի որակավորմամբ)», «Իրավաբանություն», «Մանկավարժ (տարբեր առարկաների)», «Ռազմագիտություն», «Ֆիզիկուլտուրա», «Ռուսաց լեզու», «Գյուղատնտեսություն»:

Առաջարկների վերաբերյալ նշենք, որ մասնաճյուղում արդեն 2 տարի է իրականացվում է ուսուցում՝ «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրով: Եվ այս ուսումնական տարվանից մասնաճյուղում գործում է «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով մագիստրատուրա:

Հարցվողներից **8-ը** նշել է, որ առկա մասնագիտությունները արդեն բավարար է, **2-ը** առաջարկել են հարցում անցկացնել, թե մարզում ի՞նչ մասնագիտությունների պահանջարկ կա, մեկ հարցվող նշել է, որ մասնագիտական կողմով առավել ուշադրություն դարձվի գործնականի դրսևորմանը:

**Հարցվողներից առաջարակվել է. (մեջբերում)**

**«ԵՊՀ ԻՄ մասնաճյուղը պետք է աշխատանքային շուկայի հետ փոխկապակցված լինի, որպեսզի պահանջված մասնագիտությունների գծով ավելի խորը մասնագետներ պատրաստի, որպեսզի շրջանավարտը կարողանա աշխատաքն գտնի և լինի մրցունակ: Կարծում եմ, որ շատ ուսանողների մոտ հենց մրցունակ լինելու զգացումն է ցածր, այսինքն ուսանողը հաճախ չի գիտակցում, որ ցանկացած մասնագիտության մեջ պետք է լինի մրցունակ, ավելի լավը և գերազանցելի ու ըստ այդմ կարող է հեշտ գտնել մասնագիտություն: Նաև առաջարկում եմ, որ ուսանողները բացի բուհական կրթությունից ստանան ոչ ֆորմալ կրթական գիտելիքներ՝ ինքնակազմակերպման, նախաձեռնողական, նորարարական ու ժամանակակից տեխնոլոգիաների տիրապետման, որոշումների կայացման, ժամանակի պլանավորման ու կառավարման, առաջնորդության, դժվար իրավիճակներում արագ կողմնորոշման և այլ հարակից ոլորտներում, որպեսզի շրջանավարտը աշխատաշուկա մտնի նաև**

հավելյալ հմտություններով: Հիմա աշխատաշուկայում շատ են բարձրագույն կրթություն ստացած ոչ մրցունակ կադրերը հենց վերոնշյալ հմտությունների և ունակությունների բացակայության պատճառով և, հետևաբար չեն կարողանում ապահովել սեփական մրցունակությունն ու գտնել աշխատանք»:

*Ստորև ներկայացված է **2019** թվականին կատարված հարցման արդյունքները.*

| ԹԻՎ | ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՔԱՆԱԿ |
|---|---|---|
| **1.** | Լրագրություն, PR հանրային կապեր | **11** |
| **2.** | Ռուսաց լեզվի ուսուցիչ և թարգմանիչ | **7** |
| **3.** | IT ոլորտ, Տեղեկատվատական տեխնոլոգիաներ, Տեխնիկական հմտություններ ձեռբերող մասնագիտություններ | **6** |
| **4.** | Իրավաբանություն | **4** |
| **5.** | Մարքեթինգ | **4** |
| **6.** | Աշխարհագրության ուսուցիչ | **3** |
| **7.** | Քիմիայի ուսուցիչ | **3** |
| **8.** | Կենսաբանության ուսուցիչ | **2** |
| **9.** | Զբոսավարներ՝ հաղորդակցման հմտություններով (Զարգացնել «Սերվիս» մասնագիտությունը, պատրաստել որպես գիդեր) | **2** |
| **10.** | Ֆիզկուլտուրա | **2** |
| **11.** | Ֆինանսիստ, հաշվապահ | **1** |
| **12.** | Կառավարում | **1** |
| **13.** | Գրաֆիկա և դիզայն | **1** |
| **14.** | Սոցիալական մանկավարժություն | **1** |

| | | |
|---|---|---|
| **15.** | Լոգոպեդ | **1** |
| **16.** | Քաղաքագիտություն | **1** |
| **17.** | Ռոբոտաշինություն, մեքենաշինություն | **1** |
| **18.** | Դեղագիտություն | **1** |
| **19.** | Երգ-երաժշտություն | **1** |
| **20.** | Գյուղատնտեսական զարգացման մասնագիտություններ՝ խաղողագործություն և գինեգործություն | **1** |
| **21.** | Վաճառքի մասնագիտություն | **1** |

***«Որքանով են ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատաշուկայում»*** հարցին **11** շահակից գնահատել է բարձր ***(մեջբերում՝ բարձր է Հայաստանում, մարզում միակ բուհն է և համարվում է առաջատար):***

**14** շահակից նշել է բավարար չափով:

Ստորև նշված է շահակիցների կարծիքները և առաջարկները:

**Շահակիցների կարծիքներ և առաջարկներ *(առանց խմբագրման).***

- անհրաժեշտ է ստացված գիտելիքները կիրառել յուրաքանչյուրը իր ոլորտում, մասնագիտական գիտելիքները աշխատաշուկայում համարում ենք բավարար,
- ապահովվեք կրթության լավագույն որակ և աշխատատեղերը պատրաստ կլինեն, լավագույնները հաստատապես մրցունակ են,
- կախված անհատական ինքնազարգացման կարող եմ նշել, որ բավականին մրցունակ են, եթե հաշվի առնենք, որ այսօր բավականին մեծ թվով շրջանավարտներ են աշխատում, ուրեմն կարող ենք համարել մրցունակ,
- ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները ավելի թարմ են և արդի,

- մրցունակությունը կախված է անհատի ինտելեկտից,
- ներկայումս ոչ միայն ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների, այլև գրեթե բոլոր բուհերի շրջանավարտների զգալի մասի մասնագիտական գիտելիքները գոհացուցիչ չեն և չեն կարող մրցունակ լինել աշխատաշուկայում,
- *մասնագիտական գիտելիքներից զատ շատերի մոտ է բացակայում այլ կարևորագույն հմտություններ, որը նշել եմ կետ. 20-ում՝ առաջնորդություն, ժամանակի պլանավորում և կառավարում, արագ կողմնորոշում, նոր տեխնոլոգիաների տիրապետում, վերլուծական ու քննադատական վերլուծություն, օտար լեզվի վարժ ու սահուն տիրապետում, ինքնաներկայացման կարողություն, ազատ հաղորդակցման, անընդհատ ինքնազարգացման ձգտում, բարդ իրավիճակներում արագ որոշումների կայացում և կողմնորոշում և այլն։ Այս հմտությունների բացակայությունը խանգարում է նրանց իրենց մասնագիտական գիտելիքներով հանդերձ աշխատաշուկայում լինելու մրցունակ։*

«***Աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն եք կարևորում»*** հարցին շահակիցների մեծ մասը պատասխանել են, որ կարևորում են գիտելիքները, մասնագիտական բարձր պատրաստվածությունը, սովորելու և կատարելագործվելու ձգտումը, պատասխանատվության և պարտաճանաչության զգացումը, փորձը, արագ կողմնորոշվելու, որոշումների կայացման և սովորելու կարողությունը, ճկունությունը, շփման ու հաղորդակցման կարողությունները, առաջնորդական, ստեղծագործական կարողությունները, սեփական անձի զարգացման ձգտման ունակությունները, քննադատական մտածողության և ինքնաքննադատման ունակությունները, օտար լեզվի միջին իմացության առկայությունը, ՏՏ իմացությունը, թիմային, կազմակերպչական աշխատանքը, էթիկայի կանոնները, համակողմանի գիտելիքները, կամքի ուժը, գործի նկատմամբ սերն ու նվիրվածությունը, շփման հմտությունը ու ինքնակազմակերպվածությունը: Նշվել է նաև, որ

«Ընդունում ենք մրցույթով՝ թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգին համապատասխան»:

«***ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական և մանկավարժական ինչ որակներ կցանկանայիք փոխել»*** հարցի համար ստացել ենք հետևյալ պատասխանները՝ *(առանց խմբագրման).*

- ձգտումը, ինքնակրթվելու արվեստը,
- յուրաքանչյուր ուսանող պատրաստվեր նաև որպես մանկավարժ,
- քննադատական մտածողության պակասը սեփական մասնագիտության հանդեպ,
- կցանկանայի, որ առաջնորդական, ստեղծագործական կարողությունների, արագ որոշումների կայացման հմտությունների, շփման ու հաղորդակցման կարողությունների, սեփական անձի զարգացման ձգտման ունակությունների, քննադական մտածողության և ինքնաքննադատման ունակությունների զարգացման վրա լիներ զգալի ուշադրություն, ստեղծագործական միտքը ճկուն լիներ, լինեն նախաձեռնող, ունենան դասավանդման նոր մեթոդիկա,
- կոնկրետ մեր դպրոցից հիմնականում լավ շրջանավարտներ ունեք, սակայն կան նաև ուսանողներ, որոնք չպիտի լինեին, և որևէ բան, ցավոք, նրանց մոտ փոխել հնարավոր չէ, քանի որ շատ թույլ կարողություններ ունեն,
- քննադատական մտածողությունը, մեդիագրագիտությունը, գիտելիքի մակարդակը, աշակերտների հետ կապը, մանկավարժական մեթոդիկան,
- *Ձեր տված շրջանավարտները պետք է ունենան մասնագիտական և մանկավարժահոգեբանական լուրջ պատրաստվածություն, երեխայի ներաշխարհը թափանցելու և նրանց հասկանալու կարողություն*,
- ավելի խիստ մոտենան ուսմանը առավել մեծ ուշադրություն դարձնել գործնական հմտությունների զարգացմանը,

- ստեղծել տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն, խուսափում են թիմային աշխատանքից, մեթոդական որակները, մատուցման ձևը, կազմակերպչական կարողությունները կատարելագործել և ցուցաբերել ճկունություն,
- փոփոխությունները հիմնականում կախված է անձնային որակներից,
- պրակտիկայի պակասը, կցանկանայի, որ ավելի շատ աշխատեն իրենց վրա,
- ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառումը, տիրապետելը և ինտելեկտը,
- ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներն ունեն մասնագիտական և մանկավարժական բարձր որակներ, շրջանավարտները անընդհատ ինքնակրթությամբ են զբաղվում, ինքնազարգացմամբ զբաղվելով, նրանք կարող են կատարելագործել իրենց մասնագիտական որակները, "բազմապրոֆիլ մասնագետի կարիք ունենք /ասենք քիմիա + կենսաբ/ կամ տեխնոլոգիա +կերպարվեստ+ երգ", բարձրացնել ուսանողների պատասխանատվությունը կրթության նկատմամբ, անտարբերությունը, դասին անպատրաստ ներկայանալը, անպարտաճանաչությունը, նեղ մասնագիտական գիտելիքների որակի բարձրացում, բարոյահոգեբանական արժեքները, ունենան անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ,
- աշխատանքային գործընթացին ստեղծագործական մոտեցման ցուցաբերում, ինքնակրթությամբ զբաղվելը, մագիստրոսի որակավորումը ներմուծել:

«***ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների, որ առավելությունները կցանկանայիք ընդգծել»*** հարցին շահակիցները նշել են՝ կազմակերպչական կարողությունը, ձգտումը, պատասխանատվության բարձր զգացումը, շփումը, պարտաճանաչությունը, աշխատելու մեծ ցանկությունը, թիմային աշխատանք կազմակերպելու հմտությունը, նորագույն տեխնոլոգիաններ կիրառելու կարողությունը, համարձակությունը, ինքնուրույնությունը, համեստությունը,

մասնագիտական գիտելիքները, քննադատական-վերլուծական կարողությունները, բանիմացությունը և աջակցելու կանողությունը, դասախոսական հմուտ կազմը, ինքնազարգացման ձգտումը, անկաշկանդվածությունը, դաստիարակվածությունը, նպատակասլացությունը, բարեկրթությունը, շրջահայացությունը, գիտելիքների և հմտությունների կիրառումը: Մանկավարժների համար նաև. հեռավար և ժամանակակից դասավանդման մեթոդների իմացությունը, իրենց կրթօջախին նվիրված լինելը:

Ստորև ներկայացված են մեջբերումներ *(առանց խմբագրման)*.

_Առանձնահատուկ առավելություն չկա, որ նրանց կտարբերակեր այլ համալսարանների ուսանողներից, առանձնացնեմ երևի հայրենասիրությունը, հարգանքը համայնքի ու պետության հանդեպ:

_Եթե իրենց հետ աշխատում ես որևէ ծրագրով, ունեն պատասխանատվություն և մոտիվացիա սեփական անձը զարգացնելու և թիմային աշխատելու համար:

Շահակիցների **80%-ը** նշել է պատրաստակամության և պատասխանատվության զգացումը, ինքնավստահությունը, համարձակությունը, նպատակասլացությունը, մասնագիտական գիտելիքները: **20%-ը** է բանիմացությունը և աջակցելու կարողությունը, ինքնազարգացման ձգտումը, անկաշկանդվածությունը, բարեկրթությունը, շրջահայացությունը, գիտելիքների և հմտությունների կիրառումը:

«***Կարողանում են արդյոք ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտները պատշաճ ներկայանալ աշխատանքի ընդունվելու մրցույթներին, եթե ոչ, ապա ի՞նչ խորհուրդներ կտայիք նրանց»*** հարցին շահակիցների **90%-ը** նշել է, որ միանշանակ կարողանում են պատշաճ ներկայանալ հարցազրույցներին, **10%-ը** նշել են՝ հավանաբար կարողանում են:

***Մի քանի կետով նշենք շահակիցների կարծիքներից (առանց խմբագրման).***

- մի քիչ կաշկանդվածությունը խանգարում է,

- ինքնավստահությունը պակասում է,
- ներկայանալու խնդիր ունեն բոլորը: Հարկավոր է պատշաճ ինքնակենսագրականներ կազմել, իմանալ ճիշտ կոմունիկացվել, հետադարձ կապ պահել ու հույսը քիչ դնել ծանոթ-բարեկամ համակարգի վրա,
- դպրոցում անցկացված մրցույթին մասնակցել են երկու մասնագետ, որոնք հանձնաժողովի վրա շատ լավ տպավորություն են թողել, եղել են անկաշկանդ և վստահ,
- ունենք մանկավարժներ ովքեր շատ պարտաճանաչ աշխատում են և չեն զիջում իրենց հմտություններով և կարողություններով:

Եղել են նաև շահակիցներ ովքեր առիթ չեն ունեցել մեր շրջանավարտների հետ հարցազրույցներ անցկացնել:

«*Կարողանում են արդյոք ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտները պատշաճ ներկայանալ աշխատանքի ընդունվելու մրցույթներին, եթե ոչ, ապա ի՞նչ խորհուրդներ կտայիք նրանց*». ***Ոչ հարցին շահակիցները տվել են հետևյալ պատասխանները (առանց խմբագրման).***

- Ցավոք հենց դա խնդիր է: Ինքնաներկայացման հմտությունների բացակայությունը և հավելյալ կարողությունների բացակայությունը խանգարում է նրանց մրցույթներին լավ ներկայացնելու իրենց, ուղեկցող նամակ կամ ինքնակենսագրական ներկայացնել, պատշաճ պատասխանել իրենց տրվող հարցերին, կամ էլ օնլայն տարբերակով դիմել որևէ աշխատանքի:
- Ուշադիր լինել աշխատանքի մասին հայտարարություններին, ձգտել կարիերայի բարձրացմանը, մասնակցել նաև այլ լրացուցիչ դասընթացների և սեմինարների, հնարավորինս ընդգրկուն կերպով ներկայացնել իրենց փորձն ու աշխատանքի անցնելու մոտիվացիան, ուշադրություն դարձնել ռեզյումեներին, շատ

հաճախ ենք հանդիպում վատ կազմված ռեզյումների, որը անշուշտ ազդում է ընտրանքի վրա:

- Պահել էթիկայի բոլոր նորմերը պատշաճ ներկայանալ հարցազրույցներին և ցուցաբերեն ավելի մեծ պատասխանատվություն:

«***Ձեր կազմակերպությունում աշխատող ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների քանակը***» հարցին եղել են պատասխաններ սկսած **1** աշխատակցից մինչև **29** աշխատակից: Հարցին պատասխանել է **69** շահակից և ընդհանուր թիվը կազմում է **423** և ավելի:

**4 հարցվող** պատասխանել է ոչ մեկ, **1 հարցվող** պատասխանել է այո:

«***ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներից քանիսն են աշխատում իրենց մասնագիտությամբ***» հարցին պատասխանել է **69** շահակից, որից **57**-ը նշել է, որ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թիվը կազմում է **268,** որը կազմում է՝ **63.4%:** Ընդ որում **5 շահակից** նշել է, որ իրենց կազմակերպությունում մեր բոլոր շրջանավարտները աշխատում են իրենց մասնագիտությամբ: **7** շահակից պատասխանել է **ոչ մեկ**:

**«Նրանցից քանիսն են աշխատանքի ընդունվել մրցույթով»** հարցին պատասխանել է **69** շահակից, որից **4** շահակից պատասխանել է բոլորը, **16-ը** պատասխանել է **ոչ մեկ: 49** շահակցի պատասխանների ընդհանուր թիվը կազմում է **154,** որը կազմում է **57.5%-ը:** Հարցվողներից ստացել ենք նաև այսպիսի պատասխան «Ոչ մեկը, քանի որ աշխատել են նաև մինչև մրցույթի կարգի հաստատումը, կամ ընթացքում հեռակայել են»:

Հարցման վերջում շահակիցներին տրվել է հնարավորություն կիսվել իրենց **առաջարկություններով:** Առաջարկներ ներկայացրել է **46** շահակից: Հարցի նպատակն էր հասկանալ շրջանավարտների բացասական և դրական կողմերը, առավելություններն ու թերությունները.

**Ստորև ներկայացված են հարցվողների առաջարկները *(առանց խմբագրման).***

- Բացվեն մարզին անհրաժեշտ ֆակուլտետներ:

- Ակադեմիական կաղապարներից ուսանողներին հարկավոր է դուրս բերել, ստեղծել հարթակներ այլ ԲՈՒՀ-երի ուսանողների հետ շփվելու համար, խրախուսել նախաձեռնողականությունը ու համալսարանի պատերի ներսում ազատ աշխատելու և կամարտահայտվելու հնարավորությունները։
- ԵՊՀ ԻՄ-ի առարկայացանկում ներառել մարդու հավելյալ կարողությունների զարգացման դասընթացներ կամ համագործակցել այնպիսի կազմակերպությունների ու փորձագետների հետ, ովքեր կարող են նման ծառայություններ մատուցել։ Ուսանողներին ընդգրկել զարգացման ծրագրերում։
- Քննությունները անցկացնել օբյեկտիվ, առավել ևս ընդունելության։ Արտադրական պրակտիկան դարձնել իրողություն։
- Պրակտիկան անցկացնել ավելի պատշաճ մակարդակով։
- Մշտական կապ դպրոցների և համայնքների հետ, անհրաժեշտ կադրերի պակասի ուսումնասիրություններ և խորհուրդներ շրջանավարտներին սովորելու այդ մասնագիտությունները՝ աշխատանքով ապահովելու պայմանով, վերանայել նախկին գործուղման կարգը։
- Էլ ավելի ուշադրություն դարձրեք բնագիտական հոսքին և տուրիզմին։
- Խնդրում ենք ավելի պահանջկոտ լինել ուսանողների հանդեպ։
- Առաջիկայիում լուրջ ուշադրություն դարձնել դիմորդների բազմակողմանի և որակյալ կրթության ապահովմանը, նրանց համար տարբերակներ ստեղծել իրենց մասնագիտական ոլորտներում լուրջ առաջընթաց արձանագրելու առումով։
- Տարածաշրջանում բարձր հիմքերի վրա դնել ԵՊՀ ԻՄ -ի շրջանավարտների մասնագիտական կարողությունները։
- Ընտրել լավագույններին, շատ անգրագետներին ուղղակի տեղ չտալ միայն դիմորդ ունենալու համար: Ավելի լավ է՝ նրանք դառնան լավ արհեստավոր: Այդպես կբարձրանա նաև ԵՊՀ ԻՄ -ի հեղինակությունը։

- Ապահովել ավելի բարձր մակարդակ, կապ պահել այլ կրթօջախների հետ, կիրառել նրանց լավագույն փորձը, ձգտել կատարելագործման։
- Այսքանը եթե կարողանանք պահել և առաջ տանել ամեն ինչ լավ կլինի։
- Նախապատվությունը տալ պրակտիկ և գործնական ուսուցմանը։
- Բարձրացնել մասնագիտական որակը։
- Մագիստրատուրայի տարբեր բաժինների բացում մանկավարժական որակավորումով։
- Առավել ուշադրություն դարձնել հեռակա ուսուցման որակին պրակտիկայի գործընթացին։
- Որքան հետևողական լինենք մեր աշխատանքի և ուսանողի աշխատանքի վերաբերյալ, այնքան արդյունքը կլինի բարձր: Միաժամանակ ընդունելությունը պետք է կազմակերպվի ռեալ։
- Բուհ ընդունվեն միայն լավագույները։
- Առաջարկում ենք ընդլայնել ԵՊՀ ԻՄ մասնագիտությունների ոլորտները,
- Որպես սահմանամերձ շրջան ուշադրություն դարձնել ռազմական գիտելիքների ուսուցմանը։
- Ուշադրություն դարձնել պրակտիկային և գործնական աշխատանքներին,
- Կատարել փորձի փոխանակում Երևանի պետական ԲՈՒՀ -երի հետ։
- Ավելի կատարելագործել մանկավարժական, մասնագիտական գիտելիքները։
- Առաջարկում ենք բացել այն բաժինները, որոնք ԵՊՀ ԻՄ-ում չկան։
- ԵՊՀ ԻՄ-ում դասավանդող դասախոսական կազմը ունենա բացառապես գիտական աստիճան, և շարքային ուսուցիչները, որքան էլ հմուտ լինեն, չդասավանդեն բուհում։
- Բոլորս պիտի անկաշառ լինենք և հայրենիքը կշենանա: Բոլոր ուսանողներին պատրաստել մեր ուսուցիչների նման, ավելացնել

այնպիսի մասնագիտություններ, որոնց պահանջարկը կա աշխատաշուկայում։

- Միջազգային կրթական բարեփոխումների շրջանակներում առավել ուշադրություն դարձնել ազգային արժեքների պահպանմանը։
- Հնարավորություններ տալ մասնագիտական հմտությունները և գիտելիքները խորացնել դրսում՝ որևէ հեղինակավոր բարձրագույն հաստատություններում՝ հետ վերադառնալու պայմանով։
- Ձեզ հաջողություն։
- Մասնագիտական հմտությունների զարգացման գործում ավելի լուրջ դրսևորում ցուցաբերել։
- Ապահովել միայն որակ։
- Շնորհակալ ենք…

Հարցման նպատակն էր վերլուծել շրջանավարտների մասնագիտական կարողությունները, աշխատանքի պատրաստվածությունը, աշխատաշուկայի խնդիրները, պահանջված մասնագիտությունները, ինքնազարգացման և դրսևորման հմտությունները, աշխատաշուկայում մեր շրջանավարտների մրցունակությունը: Վերլուծությունում ամփոփ ներկայացված են բոլոր հարցերի նկարագրությունները և համեմատական գրաֆիկները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ արտաքին շահակիցների հարցումների արդյունքները վերջին 7 տարվա կտրվածքով, որտեղ վերջին երեք տարվա հարցումներն իրականացվել են և առերես և առցանց եղանակով, կարող ենք ասել, որ.

ԵՊՀ ԻՄ-ը աշխատաշուկային տալիս է մրցունակ և որակյալ մասնագետներ:

Դրական, նաև գոհացուցիչ փաստ է, որ մարզում երիտասարդ աշխատուժի գերակշիռ մասը ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտ է: Նշենք նաև, որ հարցման մասնակից շահակիցներից զգալի մասը նույնպես ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտ են: Ինչը փաստում է, որ մասնաճյուղը Տավուշի մարզում, ինչպես նաև մարզից դուրս աշխատաշուկային տվել է ոչ միայն որակյալ և մրցունակ մասնագետներ, այլ նաև ղեկավարներ:

Չնայած, որ հարցման արդյունքները կարելի է համարել գոհացուցիչ, այնումամենայնիվ, ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական գործընթացը մշտապես բարելավվում է՝ հաշվի առնելով ժամանակի հրամայականը, տարածաշրջանում փոփոխվող պահանջները և զարգացող նորագույն մեթոդները: Այս պատճառով, ելնելով վերը նշված արդյունքների ամփոփումից և արտաքին շահակիցների հետ անմիջական հանդիպումներից, կարող ենք առանձնացնել, մի քանի կողմեր, որոնք առավել ևս ենթակա են ուշադրության.

- Գործնական հմտություններ,
- Մասնագիտական խոսք,
- Քննադատական մոտեցում,
- Ինքնավստահության պակաս (հարցազրույցների ժամանակ նկատելի է ինքնավստահության պակաս),
- Ինքնազարգացման ձգտում,
- Կաշկանդվածություն,
- Նախաձեռնողականություն,
- Շրջանավարտների արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություններ:

*Շահակիցների անկեղծ և ճիշտ պատասխանները, օգնում են մեզ ավելի շատ ուշադրություն դարձնել շրջանավարտների մասնագիտական որակների բարելավման հարցում:*

<u>Ելնելով վերոնշյալ խնդիրներից առաջարկվում է.</u>

- Հարցման արդյունքների մասին իրազեկել մասնաճյուղի դասախոսական և ուսանողական կազմին, քննության առարկա դարձնելով կրթական ծրագրերի կատարելագործմանն ուղղված ներկա գործընթացներում արտաքին շահակիցների առաջարկները և կարծիք-գնահատականները:
- Ուսումնա-մեթոդական վարչության, համապատասխան մասնագիտությունների պատասխանատուների հետ քննարկել կրթական ծրագրերում այնպիսի թեմաների կամ լրացուցիչ դասընթացների (օրինակ՝ «Ինչպես կազմել ռեզյումե», «Ինչպես ճիշտ ներկայանալ աշխատանքի հարցազրույցներին», «Ինքնաներկայացման հմտությունները», «Էթիկա և վարվեցողություն» և այլն) ներմուծումը, որոնց դասավանդումը հնարավորինս կապահովի շրջանավարտների մասնագիտական ու անձնային որակների զարգացումը, որը ժամանակակից աշխարհում կբավարարի գործատուների պահանջներին:
- Ելնելով ռազմավարական ծրագրի 6.1.1 խնդրից (Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները, և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից) կազմակերպել քննարկում ՌԾ-ով համագործակից ստորաբաժանումների հետ (ՈՒՄՎ, ՄԿՈԱ, Կրթական ծրագրերի պատասխանատու, ՈԻԽ, ֆակուլտետներ): Ներկայացնել առաջարկներ, մշակել նոր մեթոդներ, որոնք հնարավորություն կտան առավել զարգացնել ուսումնական գործընթացը և առավել համապատասխանեցնել ժամանակի պահանջներին:

*Արտաքին կապերի բաժին*